

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 րուբլ, կէս տարեկանը 3 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արախանյանի խանութում:

Օտարաբաղադրյալը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ա մէկ լի գոպով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանկեր ըստին 2 կոպէկ:

ՄՇԱԿ

Լրագրի ԿԵՍ ՏԱՐԱՎԱՅ Բաժանորդութեան
գինը, յուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31
1876 թ.ի 3 րուբլ է: Գրվել կարելի է
„ՄՇԱԿ“ խմբագրատան մէջ, պ. ՄԱՏՈՒ-
ՐԵԱՆԻ և նոյնպէս պ. ԱՐԱՍԽԱՆՅԱՆԻ խա-
նութում:

Խմբագրութիւնը խնդրում է նոցա, որք
դեռ չեն վճարել „ՄՇԱԿ“ ներկայ տարեկան
ԲԱՅԱՆՈՐԴԱՎՈՐՆԵՐ, շուտով հասցնել նրան
խմբագրութեանը:

Հասցէն՝ Тифлисъ, редакция армянск. га-
зеты „Мшакъ“.

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Պատմութիւնը, նրանք և մենք. — Ներքին-
տեսութիւն: Օրերորդ Ն. Անդրէեւիտս մահը:
Նամակ Ագուլիսից: Ներքին լուրեր:—Արտաքին
տեսութիւն: Թիւրքիա: Պատերազմական բե-
մից: Խոտիկա: Գերմանիա: Նամակ Կ. Պոլսից:
Նամակ Խոտիկայից: Նամակ Պարսկաստանից:
Խառն լուրեր:—Յայտարարութիւններ:—Բանա-
սիրական: Մի պատկեր:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ՆՐԱՆՔ ԵՒ ՄԵՆՔ

Երբ որ հայոց սեպհական քաղաքական
կեանքը դադարեց, երբ որ հայերը կորցրին
պետական կազմակերպութիւնը թափառակա-
նութեան ու գաղթականութեան թուականը
սկսեց կատարելապէս թաղաւորիկ Հայաստա-
նում:

Հինգ դար կայ, որ հայերը թողնելով
իրանց հայրենիքը գաղթեցին և գաղթում են:
Հինգ դար կայ, որ հայը թողնելով իր տունը,
իր տեղը թափառում է, չը գիտես ուր, բնա-
կարան որոնելու համար:

Արդեօք երկրիս երեսին քննեցի մի տեղ, ուր
հայրենիքին այդ սպիտակու գաւառը գնացած
և շուտով հենց այնտեղ մեռած չը լինի:
Այո՛ հայը ամեն տեղ գնաց: Աշխարհիս չորս
կողմը հայ գաղթականութիւններ երևալով
բնական օրէնքներից ստիպուած անյայտացան,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՊԱՏԿԵՐ

(Կարդացվեցաւ յուլիսի 27-ին գրական երեկոյի
մէջ Թիֆլիսում)

I

Այսօր Թիֆլիսի հասարակութիւնը հաւաքվել է
այստեղ, որ իր համակրութիւնը ցոյց տայ այն
քրիստոնեաներին, որոնք տանջվում են մահմետա-
կանների լուծի տակ:

Մինչև որ սլավոնացիները պատերազմում են
թիւրքերի դէմ, իրանց արիւն են թափում իրանց
ազատութեան համար,—տեսնենք ինչ դրութեան
մէջ են, ինչ են անում մեր հայերը Թիւրքիայում:

II

Ամենքդ ձեզանից տեսած կը լինէք Թիֆլիսում,
մանաւանդ տարվայ այս ժամանակին, ամառը, հայ
մշակներին, որոնք գալիս են մեզ մօտ մշակու-
թիւն անելու համար:

Ինչի մի գալիս մեր քաղաքը այդ խեղճ մէջի
կամ վանքի մշակները...

Կանչենք նրանցից մէկին ու հարցնենք նրա-
նից...

մեռան... դոցա հետքը էլ չէ նշմարվում: Տե-
ղեկութիւններ դոցա մասին կը տեսնենք դրած
միայն պատմութեան սև թերթերի վրայ:

Վերջին հինգ դարերի հայոց պատմու-
թեան գրողը երևելի հանձարի տէր մարդ
պիտի լինի: Դա պէտք է հետևէ հայերի
գաղթական ու թափառական կեանքին:—Ել
երկր կը մնայ, որ այդ պատմագիրը չը նկա-
րագրէ, էլ քաղաք կը մնայ, որ այդ հեղի-
նակը աչքի չանցնէ հայերին փնտռելու հա-
մար:—Լէհաստան, խաղա, Զոլանդիա, Բել-
գիւնիա և շատ ուրիշ ազգերի հայրենի
աշխարհներ դուրս գրուածի նիւթ կը դառ-
նան:

Մեր գիտող պատմագիրը կը նկատէ, որ
հայ մարդկանց մի թուաւոր խումբ՝ կուրա-
ցած անձնական հաշիւներից, դրած ծայրա-
յեղ եսական շահերից՝ այնտեղ է գտնու-
մի ազգային կենդանւոր, որտեղ ինքն է բնակ-
վում՝ այնտեղ է կարծում իր ազգի հայ-
րենիքը, ուր ինքը՝ հետևելով լատինական
դատարկապարտ առածին, լաւ է ստորում:—
Ել ոչ Ամստերդամ, էլ ոչ Մարսել, էլ ոչ Լոն-
դոն, էլ ոչ Վիեննա, էլ ոչ Կալիպոլիս, էլ ոչ
Կ. Պոլիս, էլ ոչ, չը գիտեմ ստատիս որ բունը
չէ մնայ, որ վերջին հինգ դարուայ մեր ազ-
գային պատմութեան հեղինակը հայերի հա-
սարակական, մասաւոր, քաղաքական, ժամա-
նակաւոր կենդանւոր չը համարէ: Ժամանակա-
ւոր եմ ասում, լաւ հասկացէք:

Պատմութիւնը իր բնական օրէնքներն ունի:
Հայոց պատմական փոփոխութիւնները ընդ-
հանուր պատմութեան թէօրեաներին են վե-
րաբերում: Մարդկային ազգերի հասարակա-
կան կեանքը միմեանց նման է: Զանազանու-
թիւնը մեծութեան ու փոքրութեան մէջ է
միայն: Պատմութիւնը իր օրէնքները կատա-
րեց և թափառական, գաղթական հայերը
յաւիտենական ջնջուեցան... Արդեօք վերջին
հինգ դարերի հայոց պատմութեանց էլ ա-
ւելի լաւ օրինակ կարող ենք ունենալ: Դա
շատ պարզ կերպով ցոյց է տալիս՝ ինչ որ
մենք ուզում ենք ասել:

Բայց դեռ կան սեղմած ուղեղներ, որոնք
ձեռնարկելով իրանց ազգի ու պատմութեան

պաշտպան՝ չեն կարողանում հասկանալ բնա-
կան օրէնքների անխախտ լինելը և մեղան-
չում են նոյն իսկ պատմութեան ճշմարտու-
թեան դէմ: Բայց դեռ գոյութիւն ունեն այն
գիտնականները, որոնք՝ կարծելով թէ մի ազգ,
որտեղ էլ լինէր, կարող է միշտ ազգ մնալ իր
կենդեցող և իր լեզուով ընտրում են իրանց
„ազգագրութեամբ“ գործունէութեան համար այսօր
փարիզ, Էդուց Պոլիս, միւս օրը Պետերբուրգ,
Վիեննա և այլն: Եւ այս բանի հետ միա-
մին կամենում են հաւատացնել, թէ հասա-
րակական մեծ բարեբաղութիւն են անում
հայ ժողովրդին: Ահա այդ գիտնական պարոն-
ներն են, որոնք կարծում են հինգ դարուայ
թափառական ու գաղթական հայրենիքին
սպիտակու, հայերի արժանի անընդունակ սե-
րունդը:

Այդ պարոնները, որոնք ժառանգաբար
սովոր չեն եղել տօնուն, ճշմարիտ աշխատանքի,
որոնք ընդունակ չեն եղել անձնութեան,
չեն գիտացել յարմար հանգամանքներից
օգուտ քաղել, գնալ ուր տեղն է՝ գաղթեց-
նել քնածնունդին, կենդանացնել հոգեւորներ-
րին ուրեմն թող հիմայ էլ հեռուից անմեղ
չաշխատեն իրանց երազական „ազգային“ գոր-
ծունէութեամբ: Պատմութիւնը ընդդիմանում
է դոցա:

Ժամանակը անցնում է և նոքա ստիպուած
օտար հասարակութեան կուլ-տուր յատկու-
թեանց, վերջապէս կը դադարեն ապրելուց:
Կամ եթէ մի քանիսը մնացին նրանցից և
վերջին շունչը բերանում կը ցանկանան թող-
նել իրանց „կենդանութեամբ“ գաղթելով թափառական
յատուկ բնակութեամբ կանոն այժմ ուր
պիտի գնանք: Եւ այդպէս կը շարունակեն
իրանց խաղաղ քաղաքականութիւնը, մինչև
որ ջնջուեն և կորչեն:

Իսկ խեղճ, հարստահարուած հայ մար-
դու՝ ամենքից մոռացուած հայրենի աշխարհը
դարերով սպասել է և հիմայ էլ սպասում է
իր զաւակներին...

Մենք ասում ենք՝ բաւական է այդ թը-
շուաւ կեանքը, աշխատենք ինքներս մեզ չը
խեղդել, ուրիշ կերպով վարուենք, գնանք
ուր տեղն է և անենք, գործենք ինչ որ գոր-

ծելու ենք, բարեխաղանք մեր կեանքը, եթէ
ոչ՝ մեզ սպառնում է կորուստ: Եւ վսեմ
պատմութիւնն էլ իր կատարեալ համաձայ-
նութիւնն է տալիս մեր ասած խօսքերին:
Իսկ նրանք պատառականում են՝ ինչպէս եղել
ենք մինչև հիմայ, այնպէս էլ պէտք է մը-
նանք... պիտի սպասենք:

Ո՛վ է ճշմարիտ՝ նրանք թէ մենք...

Թարոյ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԻՈՐԴ Ն. ԱՆԴՐԵՎԻՍԿՈՒ ՄԱՀԸ

Ամբողջ Թիֆլիսը շարունակում է խօսել
օրերորդ Նինա Անդրէեւիտս մահվան մասին:
Ամբողջ հասարակական կարծիքը դրողված է:
Ամենքը խօսում են, դատում են, վիճում են,
աւելի կամ պակաս հաւանական հետեանք-
ներ են դուրս բերում: Միայն մի բան կարելի է
այժմ արդէն գրել թէ հաստատ ասել, որ հան-
գուցեալ չէ լողացել Կրի մէջ և խեղդված
չէ եղել ջրի մէջ, այլ առաջ սպանված է
եղել, յետոյ արդէն որպէս դիակ ջրի մէջ է
գցած:

Այդ հետեանքը, ասում են, հաստատու-
թեամբ դուրս է բերել բժշկական քննու-
թիւնը:

Հաստատական քննութիւնը թէև յան-
ձնված է մի երկրասարդ քննիչի, բայց այդ
պարտը, որքան երեւում է, մեծ եռանդով և
շատ զգոյշ կերպով հետազոտում է գործը:

Սպանութեան երկրորդ օրը տան ծառա-
ները կայանաւորվեցան, իսկ շաբաթ օր, յու-
լիսի 31-ին կայանաւորվեցան իշխան Շերմա-
շիճի կալուածների կառավարիչ պ. Զոյ-
տուա և նրա եղբայրը, մի տան ինն կամ
քսան տարեկան երիտասարդ: Այդ երկու
պարոնները կենում էին այն տան ստորին յար-
կում, որտեղ և պատահեց մահը: Սպա-
նութեան երեկոյ ասում են նրանք երկուսը
տանն էին:

Մէկ բան նոյնպէս զարմացնում է ամեն-
քին: Այն տունը, որտեղ խեղճ օրերորդ կե-
նում էր իր մօր հետ, յայտնի էր ամբողջ
կոյտիկայում որպէս օտար մարդուն մի ան-
մատչելի տուն, որովհետև նրա գաւիթում
կային մի քանի ահագին և կատաղի շներ...
Եթէ զրաւի աւազակներ կամ գողեր եկած
լինէին, շները անպատճառ աղմուկ կը բար-

ելի լաց է լինում, էլի համբուրում է խալը, էլի
աղօթք է անում...

V

Ինչ է պատահել գիւղի հետ մինչև որ մեր մը-
շակը իր հայրենիքից դուրսն էր... Ահա ինչ է պա-
տահել:

Թիւրքաց տերութիւնը որ ծանր, անտանելի
հարկ է պահանջում իր քրիստոնեայ հայազաւակնե-
րից, մի և նոյն ժամանակ չէ պաշտպանում իր
հայազաւակներին բարբարոս քուրդ աւազակների
դէմ: Քուրդները եկել են, քանդել են դիւղը, ամեն
բան ինչ որ կար կողոպտել են, տարել են ինչ որ
կարողացան տանել, իսկ ինչ որ չը կարողացան
տանել՝ քանդել ու այրել են... Մեր խեղճ պան-
դուխտ մշակի առնն էլ քանդել են, հուճեքը այ-
րել են, պառաւ ժող սպանել են, երկու եղբայր-
ները մինի գլուխն են կտրել, միւսին կախ են ա-
րել, իսկ կնոջ ու երեխաներին գերի են տարել...

VI

Խեղճ մշակը լաց եղաւ, լաց եղաւ,—բայց ինչ
կօքնէ լացը... նա սրբից իր արտասուածքը,—ու-
գնաց թափառելու գիւղից դուրս, քաղաքից քա-
ղաք, աշխարհից աշխարհ...

Եւ այս դրութեան մէջն է մօտ երեք միլիոն
հայ երկրագործ ժողովուրդը Թիւրքիայում:

Գլխիդր Արծուրի

կառավարութեանը, կազմելով կամուրջները
դնելով, որոնք պէտք է պատերազմէն հաշ-
րենքի (?) համար:—Հռոմի մէջ հրատա-
րակող «Il Diritto» լրագիրը նորեւն առ-
պէս է կամաւոր սօցիալական ջրհարեալները,
որ նրանք ուզել են թիւրքահայաստան քը-
րիստոնեաներին և որի մէջ նրանք ցոյց են
տալիս իրանց մարդկային զգացմունքը, պար-
տաւերով այն անիրաւութիւնները և բարբա-
րոտութիւնները, որք կատարուեցան Բուլղա-
րիայում չեքէններին և բաշի-բուշուկներին
ձեռքով: Մենք, ասում է ջրհարեալները,
պէտք է կռուենք մեր հայրենիքի թշնամիներին
դէմ, բայց պէտք է պատուենք մարդկային
իրաւունքները և ապահով թողնենք կանանց,
երեխաներին և ծերերին:—Բոլոր լրագիրնե-
րում լուր է տարածվել, որ սուլթան Մու-
րադ V շատ հիւանդ է, կամ զուցէ արդէն
վախճանված է, բայց այս իրողութիւնը առ-
ժամանակ զայտնի են պահում, որ ազդե-
ցութիւն չունենայ նրա յաջորդի ընտրու-
թեան յաջորդելու վրա: Ասում են որ յաջորդը
ընտրվել է Հալիլը, Մուրադի եղբայրը:—Առ-
հասարակ ամբողջ խորհրդով զբաղված են
միայն երկու հարցով՝ նախ յուլիսի 26-ին
Հռոմի անկախ մէջ նստի մասին են խօսում
ուր կառավարութեան կուսակցութիւնը յաղ-
թող դուրս եկաւ, անցիկացնելով 12 ձայների
բարձրութեամբ իր առաջնորդութիւնը ոչ թէ
միայն չգլխի վերջնական և քննադատի
ազատ նաւահանգիստները, այլ այդ իրա-
ւունքը ընդարձակել և այլ նաւահանգիստ-
ներին վրա: Երբորդ հարցը, որ ամենքին հե-
տադրբարձ է և ամեն տեղ խօսակցութեան
առարկայ է, ի հարկէ արեւելեան հարցն է,
որին խաղաղութիւնը, իրաւի, ոչ միայն խա-
ղաղ, այլ և զործով են մասնակցում: Միայն
նոյն մէջ կազմակերպ մի կենտրոնական ընկե-
րութիւն, որի նպատակը պիտի լինի ազատել
Բալկանեան (կամ ինչպէս այս ընկերութեան
ջրհարեալները ասում է՝ «սլավոն-կիական»)
թերակողմն քրիստոնեայ ազգերին թիւրքերէն
տիրապետութենէն: Նոյն ուղղութեամբ կազմ-
վեցաւ մի ընկերութիւն Բոսնիայ քաղաքում,
որ առ ժամանակ ուղարկեց Սերբիային իր
բոլոր ձեռքին տակ ունեցած դումարը, որ
հասնում էր մօտ 4000 ջրանիւ: Բայց այս
կանոնադրութեան ընկերութիւնները, խաղաղ-
ները մեծ խնդիրով դնում են իրեն և կամա-
ւոր զինուորականներ պատերազմելու սլավո-
նական ազգերի ազատութեան համար և այս
զինուորների թիւում կան շատ զարբաղիստ-
ներ և ունեն իրանց մէջ վարժ զորավարներ:
Միլանի մասնագէտով ջրհարեալները ասում
է թէ խաղաղութեան պարտաւորութիւնն է
օգնել ազատութեան համար պատերազմող
սլավոնական ազգերին, ինչպէս որ իրանց օգ-
նեցին այլ ազգերը այն ժամանակ, երբ նոքա
ապստամբվեցան օտար լծի դէմ:

Միլանո.

Ա. Արծրունի

ԳԵՐՄԱՆԻԱ

Հռոմով կը կատարվեն գերմանական պար-
լամենտի պատգամաւորների ընտրութիւն-
ները: Գերմանական լրագիրները արդէն սկսել
են զեղովել ընտրութեան հարցով: Գերմա-
նական «Post» լրագիրը հրատարակեց նորեւ-
րումն պահպանողական կուսակցութեան պի-
րում: Այդ կուսակցութիւնը յայտնում է
որ ամեն ջանքերը կը թափէ իշխան Բի-
մարի անկախութեան հողաւորականութեան
դէմ բռնած քաղաքական ընթացքը պաշտ-
պանելու համար:—Բաւարիայի թագաւորը
հրապարակեց գերմանական կայսրին ներկայ դրոշ-
միւն Բայրութի մէջ, որով շուրջ շնամ թա-
րօնը պիտի բացվի Բիւրսը Վադնէի օպե-
րանքով: Գերմանական կայսրը խոստացաւ
նոյն իրերը երբ օր Վադնէի օպերաների կա-
տարման ներկայ գտնվելու համար:—Գերմա-
նիան, ինչպէս յայտնի է, բոլորովին անտար-
բեր է վերաբերվում արեւելեան հարցին: Մենք
խօսում ենք տերութեան մասին: Բայց հա-
տարակական կարծիքը համարում է սլավո-
նացիներին և ցոյց է տալիս իր համակրու-
թիւնը նուիրաւորութիւններ ժողովելով յո-
գուտ Թիւրքահայաստանի քրիստոնեաներին:
Նոյնպէս բազմաթիւ գերմանական կամաւոր-
ներ և օգնիչներ ծառայում են սերբիական
և չեքոսլովակական զօրքերի մէջ: Պատերազմա-
կան առողջական մասի մէջն էլ կան բաւա-
կան գերմանացի բժիշկ-կամաւորներ: Զարմա-
նալի է որ Անգլիայից յետոյ ամենից անտար-
բեր և միշտ անգամ թշնամական աչքով
է նայում քրիստոնեաների յուսահատական
կռուի վրա այն ազգը, Ֆրանսիան, որ միշտ
աղաղակում էր թէ ինքն բարեկամ է պաշտ-
պան է ամեն ճշմարտ ազգութիւններին, այն
ազգը որ ցոյց էր տալիս միշտ թէ համակ-
րում է իրանց ազատութեան համար պատե-

րապնդ ազգութիւններին: Ֆրանսիան արգելեց
մինչև անգամ այն, որ բոլոր եւրոպական պե-
տութիւնները թող անտեղի վերադարձ-
ներին օգնելու համար կազմված միջազգային
ընկերութեան Ֆրանսիական բաժնի անդամ-
ներին գնալ պատերազմական դաշտը:

ՆԱՍՏԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Յուլիսի 25-ին

«Մեծամիտ Հաւադիս» լրագիրն գրած մէկ քանի
լուրերը «Մանգուսի» էֆֆերայ լրագիրը բոլորովին
սուտ հանելու համար, քսան կամ երեսուն հոգիէ
բաղկացեալ հայազգի երիտասարդների մի խումբ,
«Մանգուսի» խմբագրատունը կերթման ու կը սկը-
սեն պոռալ ու խայտառակել թէ ինչպէս կը յան-
դգնի սուտ հանել յիշեալ լրագիրն սուտ լուրերը:
Վերջապէս բաւական անկարգութիւններ կատա-
րելէն ու ապօրինակոր խոսքեր ըսելէն վերջը, ու-
սովանութեան կողմէն «Մանգուսի» խմբագիր պ.
Փանոսեան կը ձերբակալուի և խուռն բաղմու-
թեամբ ոստիկանութեան դուռը կերթման: Այս մի-
ջոյն բաղմութեան միջէն, որուն թիւը արդէն
հարիւր յիսուն հոգիի հասած էր, շատերը բարձր
ձայնով կը պարսաւէին պ. Փանոսեանին կերպ կերպ
անկախ խօսքերով: Ուստի ոստիկանութեան պա-
տենէի կողմանէ կը նայեցուի պ. Փանոսեանի թէ
ինչո՞ւ ժողովրդին մէջ յուզմունք ու խռովութիւն
ըլլալու պատճառ կը լինի. պ. Փանոսեան ալ կըսէ
թէ՝ հիմա զրուս խիստ չիօթված է և թէ բոլոր-
րովին շարժած եմ այս բաղմութեան ըրած ան-
վայել վարմունքներէն, ուստի խնդրեմ որ այդ ձեր
հարցման պատասխանը ուրիշ անգամ թողուք:
Պաշտենի կողմէն պ. Փանոսեանի այդ խնդրը
սիրով ընդունվեցաւ ու դատը ուժ օր վերջը մնաց:
Անդրեանսօցիայ մէջ երեք հարիւր հոգիէ բաղ-
կացեալ կամաւոր զօրաց խումբ մը կազմուելով,
կը սկսեն զանազան անկարգութիւններ ու ոճրա-
գործութիւններ ընել. իսկոյն կառավարութիւնը
նրանց վիճակագրութեան ձերբակալելով, քաղաքին
հրապարակին վրա կախադանի բարձրացնել կը
հրամայէ և յիսուն հոգիի չափ ալ կը կալանաւո-
րուին:

Ձէյթունի գաղութումը որ բարբարոսական ոճ-
րագործութիւն մը գործած էր հայ երիտասարդ մը
խեղդել տալով, արդէն կալանաւորուած ու քնը-
նութիւն առնուած ըլլալով, Բ. Գուռը խոստացած
է սրբազան Պատրիարքին պէտք եղած հարցաքն-
նութիւններ ըլլալէն վերջը յիշեալ պաշտօնակալին
կողմէն պատիժ տալ:

Կ. Պօլսոյ մէջ կամաւոր զինուորագրութիւնը դա-
դրած է, ու կառավարութեան կողմէն բոլորովին
արգելուեցաւ կերպ կերպ անկարգութիւն պատ-
ճառելու համար:

Կ. Պօլսոյ երեք հայ լրագիրների կառավարու-
թեան կողմէն բոլորովին խափանուեցան «Օրա-
գիր», «Լրագիր», և «Մեծամիտ Հաւադիս» լրագիր-
ները:

ՆԱՍՏԱԿ ԻՏԱԼԻԱ

Միլանո 24-ին յուլիսի

Տարվայ այս ժամանակին ուրիշները աշխատում
են հեռանալ այս քաղաքից, իսկ ես այստեղ եմ
գալիս: Պատճառը հասկանալի է՝ ազատ ժամա-
նակը միշտ ամենայնպէս չէ ճանապարհորդու-
համար, մասնաւոր երբ ազատ ժամանակը ընկ-
նում է յուլիս ամսի մէջ: Գուցէ ուրիշներ այս-
պէս դատեն, բայց ես իմ կողմից նախապատուեցի
մի քանի օր անցկացնել Միլանոյ մէջ, չը նայելով
որ այստեղի չորքը գուցէ գերազանցել է մեր
թիֆլիսի երեկի չորքից: Չը նայելով որ յուլիս և
օգոստոս ամիսները առհասարակ լաւ ժամանակ
չեն մի մեծ քաղաք այցելելու համար, saison չեն
ինչպէս սովորաբար ասում են եւրոպացիները, բայց
այստեղ, ինչպէս ամենայն այլ մեծ քաղաքում կայ
շատ բան տեսնելու և այս ամիսներում:

Որքանի փոքր է, որքան զեղեկացել է Մի-
լանոյ այն ժամանակից երբ ես նորան 1867 թւին
առաջին անգամ տեսայ: Ամբողջապէս կերպարա-
նախօքն է. այնտեղ ուր նեղ փողոցներ էին և
հին, նեղ և բարձր միջնադարեան տներ, այժմ
փառաւոր նոր տներով զարդարված լայն և յար-
մար փողոցներ են: Երեկոյն մայր եկեղեցին, հիւ-
սիսային խաղաղի ամենազեղեցիկ տաճարը, որ
սկզբում էր հին քաղաքի բարձր տների մէջ, այժմ
յանկարծ կանգնած է արձակ և նոր տներով չը-
ջապատած մի գեղեցիկ հրապարակի վրա, այնպէս
որ ցոյց է տալիս իր ամբողջ գեղեցկութիւնը և
այժմ միայն կարելի է իրաւամբ գարմանալ 14-դ

դարու ճարտարապետի յանդուգն և վեհալ դադա-
փարի վերա:

1386 թւականին էր որ Էնրիկո Գամոդիա (En-
rico Gamodia) այս երեկի շինութիւնը սկսեց,
որ ամբողջ Եւրոպայի ամենամեծ եկեղեցիներից
մէկն է: Նա ամբողջութեամբ իր հարկերից աւել
աշտարակներով շինած է սպիտակ մարմարից
և ինչպէս ներքը նոյնպէս և դուրսը զարդարած
է երեկի նկարիչները և կանգնադորձները՝ պատ-
կերներով, արձաններով և ըրելիքներով:

Մայր եկեղեցու հրապարակը չըբազաւորող տե-
րից իր շինութեան գեղեցկութեամբ միլանցիներ-
ից շատ սիրած է Galleria Vittorio-Emma-
nuele, մի շինութիւն որ կազմված է երկու լայն
և բարձր, ապակիով ծածկած անցքերից, որոնք
ուղիղ անկիւնով կտրում են իրար և զոյգ միա-
որդկու տեղում մի գմբէթ է որ մօտ 30 մետր
լայնութիւն և 50 մետր բարձրութիւն ունի և նոյն-
պէս ապակիով է ծածկած: Այս գմբէթի տակ զը-
նուում են 24 արձաններ երեկոյն խաղաղութիւնը,
որոնցից բաւական է յիշել Բաֆայէլ Սանցիո, Գա-
տէ Ալիքիերի, Միքէլանջելո Բուստարօտտի, Տօր-
կուատո Տաստօ, Պետարարի և այլն: Առհասարակ
յառաջին է Միլանոյի խաղաղութիւնը երեկոյն մարդ-
կանց յիշատակին մեծ արժէք տալու ուղիւ-
թիւնը: Ամեն տեղ ուր և գնաք կը գտնէք երեկոյն
մարդկանց յիշատակին կանգնեցած արձաններ,
որոնք առանձին ճաշակով են կառարկված: Մի տեղ,
հասարակաց այգու դիմաց կը տեսնէք մի անա-
գին արձան—դա կալուսին է՝ այն երեկոյն մարդը,
որ խաղաղի միութիւնը հաստատեց, երբ ֆրան-
սիական և իտալական, մասնաւոր Գաբրիելլի
զօրքերը ազատեցին այս երկիրը օտար տիրապե-
տութիւնից և զանազան փոքր իշխաններից, որոնք
միայն ճշուժ, անբարոյականացնում և կողոպտում
էին իրանց հպատակ ժողովուրդը՝ ինչպէս մա-
նաւանդ եղել է այդ Նապոլի բուրբոնեան ար-
քայութեան մէջ:—Գնացէք Միլանոյի փողոց-
ներով և ձեր աչքին ախարալ կընկնի La Scala
երեկոյն օպերա-թատրոնի հրապարակի վրա մի
գեղեցիկ արձան սպիտակ մարմարիցից՝ դա կանգ-
նեցրել է Միլանո քաղաքը երեկոյն նկարչին Լեո-
նարդօ դա Վինչի (Leonardo da Vinci): Գլխաւոր
արձանի տակ, ոտի չորս անկիւններում կը տեսնէք
այլ չորս արձաններ՝ տղա երեկոյն նկարչի ամե-
նաշնանաւոր աշակերտներն են: Հռոմով նոյն
պատին պիտի արժանանայ և անցեալ տարի մե-
նած Ալեքսանդրօ Մանձոնի գործը, ժողովուրդը
նրան չաա սիրում էր և զուցէ մինչև անգամ ժո-
ղովրդից ամեն մէկը կարգացել է նրա գլխածնեցը
(ի հարկէ նոքա որք կարգալ գիտնէ):

Այլ անձինք որոնք ապրել են Միլանո, յիշատակ-
ված են նոյնպէս՝ այն տանը, ուր նոքա կացել են,
պատի մէջ գտնվում են սպիտակ մարմարից
տախտակներ, որոնց վրա ոսկեալ տառերով զը-
րած է երեկոյն մարդու անունը և այն թիւը, երբ
նա բնակվել է այդ տան մէջ:

Միլանո, չը նայելով որ մեծ քաղաք է և 295
հազար բնակիչ ունի, չունի մի համալսարան—այդ
իւրովն իւր մասնաւոր այն պատճառով զարմա-
նալի է, որ ամեն փոքր ի շատէ մեծ քաղաք իտա-
լիայում ունի մի սեփական համալսարան, այնպէս
որ զոքա թիւը հասնում է մօտ երեսունի, թէ և
նոյնանից շատերը աւելի պրօֆեսօրներ քան թէ ու-
սանդներ ունեն, ինչպէս յայտնի է օրինակ Սա-
րդինիա կղզու վրա գտնվող երկու համալսարան-
ների մասին: Կալիարի և Սասարի (Cagliari, Sas-
sari) քաղաքներում:

Համալսարանների այդ մեծ թիւը մեկնվում է
զորանով որ երբ խաղաղութեան զանազան փոքր տե-
րութիւնների էր բաժանված, ամեն մէկը զոյգանից
աշխատում էր որ իր երկրում լինէր այն ամենը,
ինչ որ կարող է դրսուել այսպիսի մի փոքրիկ
երկրի անունը բարձրացնել: Այս է պատճառ որ
հիմնվում էին անթիւ համալսարաններ, իսկ տար-
բաւան ու միջնակարգ ուսումնաւարանները պակա-
սում էին: Թէ անցեալ թէ ներկայ միլանցիներին թիւը,
որոնց շատերի դոյուքութիւնը բոլորովին աւելորդ է,
որովհետեւ աղաղակ է—բայց այդ ցանկութիւնը
կառավարութեան կողմից ժողովրդի մէջ մեծ ընդ-
դիմութիւն է գտնում, ոչ թէ այն պատճառով որ
ժողովուրդը ճշմարիտ մի օգուտ է տեսնում այդ
համալսարաններից, այլ սրովհետեւ նրանք մտնող
են տալիս նորա փառաւորութեանը:

Միլանո, կրկնում եմ, քաղաքապետ չունի մի հա-
մալսարան, բայց ունի մի բաղմարուստեան զոյգ-
րոց և մասնաւոր շքեղարուստեանի մի ճեմարան,
որ միաւորված է երեկոյն Բրերա (Brera) ակադե-
միայի հետ:

Չը գիտնեմ հաստատ ճիշդ է դա թէ ոչ, բայց Մի-
լանո աւելի տպաւորութիւն է անում մի քաղաքի,
որի բնակիչները մեծ մասը իրանց եկամուտներով

ապրողներն են արհեստասերներից է բաղկացած:
Տարվայ այս եղանակին երեկոյն Միլան օպերա-
կան թատրոնը բաց չէ, ուրեմն ոչինչ տեղեկութիւն
չեմ կարող տալ նորա մասին. մնացած թատրոն-
ները կարծեմ այնքան նշանաւոր չեն որ արժենար
նրանց վերա խօսելու:

Ամբողջ քաղաքը մէջ նշմարվում է ձգտուն
դէպի շքեղութիւն և զեղեցիկ շինութիւններ. այս-
պէս օրինակ բացի արդէն յիշված շինութիւններից
ուշադրութեան արժանի է Arco Sempione մեծ
դուռը (կամ բառացի թարգմանութեամբ կամարը)
որ վաղուց շինված է արդէն, բայց վերանորոգվե-
ցաւ վերջին տարիներում, որի մասին վկայում են
արձանադրութիւնները, որոնք այս շինութիւնը
նուիրում են ի պատիւ ազատութեան խաղաղի հետ:
Օտար լծի տակից և որոնց մէջ յիշվում է Նապո-
լէոն III և Վիտտորիօ Էմանուէլէ II անունները,
իրեն խաղաղի փրկիչները:

Ես նպատակ չունեմ մանրամասն նկարագրել
Միլանո՝ դա շատ ժամանակ կը պահանջէր և զուցէ
հետաքրքիր էլ չէր լինի նոյնա համար, որոնք ան-
ձամբ ծանօթ չեն այս գեղեցիկ քաղաքի հետ:

Միւս անգամ կախառնում եմ քանի տեղեկութիւն
տալ խաղաղի այժման դրութեան մի քանի կէ-
տերի վերա, որոնք սերտ կապ ունեն նորա ան-
ցեղալի հետ և փոքր ազդեցութիւն չեն գործել իտա-
լացու բնաւորութեան վրա:

Ա. Արծրունի

ՆԱՍՏԱԿ ՊՕԼՍՈՒՍՏԱՆԻՑ

Գալիւէթ, յուլիսի 25-ին

Այս տարի Միլանոյի մէջ յայտնված ժա-
տախտի պատճառաւ Պարսկաստանի յարաբերու-
թիւններն Բաղդադի հետ կարուցեցան, պարսիկ-
ներին արգելք դրուեցաւ այն կողմերում մտնելու:
Այս արգելքը դրեց պարսիկներին մի նշանաւոր
կրօնական միջիջարութիւնից, այն է՝ քաղաք-
ալ ուսումնաւարանութիւնը, որ կատարվում է Բաղ-
դադի փոքր ինչ հեռու Նաջաֆ կոչված տե-
ղում, ուր դրած են Ալիի նախատակած սրկները
Իսմաիլ-Հասանի և Իսմաիլ-Յուսէյնի շիրմները:

Քաղաքային ուսումնաւարանութիւնը պարսաւորա-
կան է ամեն մի մասնաւորների համար որ պատ-
կանում է շիա աղանդին: Եթէ մի մասնաւորական
ամբողջ հարստութիւնը հասնում է այն չափին, որ
նա կարող է հոգալ ճանապարհի ծախսը, պէտք է
անպատճառ կատարել իւր ուսումնաւարանութիւնը,
հակառակ դէպքում նա օրէնքի դէմ մեղանշած
կը համարվի: Մի այսպիսի մասնաւորութիւնը
ամեն տարի Պարսկաստանի ամենահեռաւոր ան-
կիւններից անգամ ուսումնաւորների հաղորաւոր
կարաւաններ քաշում է դէպի իմամներին սուրը
շիրմները և աղքատ, ողորմելի ժողովրդի արծաթը
ծախսվում է օտար երկրում:

Թողեալ այդ, պարսիկներն իւրեանց մեռելներին
դիակներն եւ տանում են Բաղդադ և թաղում են
Նաջաֆի հողի մէջ որ սրբուած է իմամների արեւ-
նով:

Այս տարի, որպէս ասեցինք, ժառանգաւոր պատ-
ճառաւ պարսիկներն զրկուեցան ինչեւ կրօնական
միջիջարութիւններից: Բայց իմամներն չուզեցին
թողնել Պարսկաստանի ժողովուրդին անխնամ և
կարօտութեան մէջ: Նրանք մտածեցին՝ եթէ ժո-
ղովրդին արգելուած է իւրեանց մօտ գալ և իւ-
րեանց ուսում կատարել, աւելի լաւ է, որ իրանք՝
իմամներն տեղափոխվեն ժողովրդի մօտ և նրանց
կարօտը լցուցանեն: Եւ յանկարծ նրանք Բաղդա-
դից գաղթելով յայտնվում են Պարսկաստանի խոյ
քաղաքում:

Յիշեալ քաղաքում կայ մի վաղեմի մատուռ,
որին տեղացիք կոչում են մաղվարալ, այնտեղ
դրած են մի քանի սէրի դնելի, այսինքն իմամ-
ները սերունդներն իր շիրմները: Մատուռի
միաբանութիւնը կազմող մուսուլմաններից մէկն յայտնի
տեղիքի մէջ տեսնում է Բաղդադի իմամներին,
որոնք ասում են նրան, «Մենք Քարաւայի իմամ-
ներն ենք, մենք չուզեցինք, որ այս տարի պաշ-
տիկներն զուրկ մնային մեր շնորհներից, և եկանք
Պարսկաստան: Այս մատուռն կը լինի մեր բնա-
կարանը, այստեղից մենք կը թափենք մեր զօրու-
թիւնները ժողովրդի վրա: Վերջին իւրեանց կաղերն
կոյրերն, և անդամաւորներն, և նրանք բռնկվել են
կը գտնեն»:

Իմամների խոյ քաղաքում յայտնվելու լուր
կայմակի արաղութեամբ տարածվում է մինչ:
Պարսկաստանի ամենախորին ծայրերը, և ամեն
կողմից կոյրեր, կաղերն, անդամաւորներ և դա
նազան արտաւորներն աւաղին բազմութեան թափ
վում են դէպի ինչեւ քաղաքը, և հրաշալի կերպ
բռնկվում են:

